ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

✉ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92
Fax /0322/ 2-07-70

թիվ _____

« _____» _____ 2025 թ.

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ
Դ.ԽՈՒԴԱԹՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Խուդաթյան

Ի պատասխան Ձեր՝ 12.03.2025թ. թիվ ԴԽ/15.3/8230-2025 հանձնարարականի, հայտնում եմ, որ ըստ Վանաձորի համայնքապետարանի կողմից տրված պարզաբանման (կցվում է), նշված բնակելի շենքի բոլոր բնակիչներին տրվել են փոխհատուցումներ:

Առդիր՝ էլեկտրոնային ֆայլ:

X _____

Հարգանքով՝ Ա.Ղազարյան

կատ. Լ.Հախինյան
հեռ. /0322/ 2-03-91

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
✉ 2001, ք.Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040, 0322 22648, vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

N 01/2043 13 մարտ 2025թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ՄԱՐԶՊԵՏ ԱՐԱՄ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Ղազարյան

Ի պատասխան Ձեր 12.03.2025թ. թիվ 01/108,3/02258-2025 գրության.

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Դավիթ Խուդաթյանին ուղղված քաղաքացի Մարի Մովսիսյանի հարցմանը տեղեկացվում է, որ Լոռու մարզի առաջին ատյանի դատարանի 27.08.2004թ. թիվ 2/1717 վճռի համաձայն Վանաձոր քաղաքի Շիրակի խճուղու երկրաշարժի հետևանքով քանդված թիվ 40 շենքի թիվ 401 սենյակի նախկին բնակիչ Անուշ Մովսեսի Մովսեսյանը հաշվառվել է երկրաշարժի հետևանքով բնակարանները կորցրած բնակարանի կարիքավոր քաղաքացիների 2-րդ հերթացուցակում (վճիռը պարտավորեցրել է Անուշ Մովսեսի Մովսեսյանին, Հասմիկ Արտավազդի Մովսեսյանին և Հայկուհի Ալեքսեյի Մովսեսյանին ընդգրկել բնակարանային բարելավման կարիք ունեցողների ցուցակում):
Տվյալ հերթացուցակը գործող կարգի համաձայն վերջին անգամ ուղարկվել է Լոռու մարզպետարան 2008թ. դեկտեմբերի 1-ին:
Միաժամանակ տեղեկացվում է, որ Շիրակի խճուղու թիվ 40 քանդված շենքի թիվ 401 սենյակում բնակվող ընտանիքը, ինչպես նաև տվյալ շենքում սենյակներ զբաղեցրած բոլոր քաղաքացիները սահմանված կարգով ստացել են բնակարաններ:
Ձեզ է ներկայացվում Լոռու մարզի առաջին ատյանի դատարանի թիվ 2/1717-2004թ. վճռի պատճենը:

Առդիր՝ էլեկտրոնային նյութ:

Հարգանքով՝

Недействительная подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Подписано: PELESHYAN ARKADI 2809790434
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

Կատ. Համապիրությունների աշխատանքների համակարգման բաժնի պետի տեղակալ՝ Կարեն Կոստանյան

ՎՃԻՌ

ԳՈՐԾ ԹԻՎ 2/ 1717-2004 թ.

Հանուն Հայաստանի Հանրապետության

Լոռու մարզի առաջին ատյանի դատարանը՝ հետևյալ կազմով.

Նախագահող՝ դատավոր Վ. Հովհաննիսյանի

քարտուղարությամբ՝ Գ. Ասլամազյանի

Մասնակցությամբ

Հայցվոր՝ Անուշ Մովսեսի Մովսեսյանի

Պատասխանող՝ Վանաձորի քաղաքապետարանի

Ներկայացուցիչ՝ Տ.Շահվերդյանի

Դռնբաց դատական նիստում, Վանաձորում, 2004 թվականի օգոստոսի 27-ին քննեց քաղաքացիական գործն ըստ հայցի Անուշ Մովսեսի Մովսեսյանի ընդդեմ Վանաձորի քաղաքապետարանի՝ բնակարանի կարիքավորների հերթացուցակում ընդգրկելու պահանջի մասին:

Դատաքննությամբ և գործով ձեռք բերված ապացույցների հետազոտմամբ՝ դատարանը

ՊԱՐԶԵՑ

Հայցվորը, դիմելով դատարան, հայտնել է, որ ինքը 1982թ.-ի ապրիլ ամսից բնակվել է Վանաձորի Շիրակի խճ. թիվ 40 շենքի, թիվ 401 սենյակում: Ինքը այդտեղ հաշվառվել է 1982թ. ապրիլի 27-ից: Նշված շենքը եղել է հանրակացարանային և այդ պատճառով ինքը համարվել է բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ու որպես այդպիսին հաշվառման է վերցվել և ընդգրկվել հերթացուցակում: Ինքը այդ սենյակում բնակվել է մինչև 1988թ. դեկտեմբերի 7-ի երկրաշարժը, որի հետևանքով շենքը փլուզվել է և ինքը ստիպված բնակվել է տարբեր վայրերում(տնակներում) և մինչ այժմ համարվում է բնակարանային պայմանների կարիք ունեցող: Բնակարանային հերթացուցակի կապակցությամբ ինքը դիմել է վանաձորի քաղաքապետարան, սակայն իրեն պատասխանել են, որ Վանաձորի քաղխորհրդի գործկոմի 1992թ. փետրվարի 28-ի թիվ 5-2-1 որոշմամբ, հիմք ընդունելով ՋԵԿ-ի ադմինիստրացիայի գրությունը, իրենց ընտանիքին հանել են բնակարանային կարիքավորների հերթացուցակից՝ բնակարանում 1982թ.-ից չբնակվելու պատճառով: Սակայն իրականում տեղի է ունեցել իր իրավունքների խախտում, քանի որ նրանք այդ հիմքը չունեն, որ իրենք չեն բնակվել այդ հասցեում, բացի այդ ինքը մինչև 1988թ. բնակվել է այդ հասցեում: Ինքը գտնվում է նյութապես անապահով վիճակում, միայնակ մայր է և ունի երկու անչափահաս երեխաներ:

Ելնելով վերոգրյալից՝ դատարանից խնդրում է պարտավորեցնել Վանաձորի քաղաքապետարանին իրեն և ընտանիքի անդամներին վերականգնել բնակարանի բարելավման կարիք ունեցող անձանց հերթացուցակում:

Դատաքննության ընթացքում հայցվորը պնդեց իր պահանջը:

Պատասխանողի ներկայացուցիչը առարկեց պահանջի դեմ՝ բացատրություն տալով այն մասին, որ հայցվորը հանվել է հերթացուցակից 1992թ. փետրվարի 28-ի քաղխորհրդի գործկոմի 5-2-1 որոշմամբ: Պարզվել է, որ ջերմէլեկտրակայանի ադմինիստրացիայի կողմից ներկայացված ցուցակով թվով 10 ընտանիքներ չեն բնակվել Շիրակի խճ. թիվ 40 շենքում, այնուհետև ներկայացվել է անձանց ցուցակ, որոնք բնակվել են հանրակացարանում, սակայն դրա մեջ հայցվորի անուն, ազգանունը չկա: Նույն ցուցակում թիվ 401 սենյակի համարի տակ գրված է Կորյուն Գրիգորյանի ընտանիքի կազմը: Նշված շենքի բոլոր բնակիչները, որոնք եղել են քաղաքում, բոլորը ապահովվել են բնակարաններով: Բացին այդ ինքը միջնորդում է կիրառել հայցային վաղեմություն, քանի որ հայցվորը հերթացուցակից հանվել է 1992թ.-ին, այսինքն անցել է շուրջ 12 տարի:

Վերլուծելով կողմերի ներկայացրած փաստարկները և համադրության մեջ գնահատելով դատաքննությամբ հետազոտված ապացույցները՝ դատարանը հանգեց այն եզրակացության, որ հայցվորի պահանջը ենթակա է բավարարման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

- Այն փաստը, որ Անուշ Մովսեսի Մովսեսյանը հաշվառված բնակվել է Վանաձոր քաղաքի Շիրակի խճ. թիվ 40 շենքի, թիվ 401 սենյակում, հաստատվում է գործում առկա ցուցակով և անձնագրի պատճենով(գ.թ.6,13):
- Գործում առկա է ծննդյան վկայականների պատճենները, ըստ որոնց՝ Հասմիկ Մովսեսյանը ծնվել է 14.02.1989թ.-ին և Հայկուհի Մովսեսյանը ծնվել է 29.07.1997թ.-ին(գ.թ.7,8):

---Համաձայն ՀՀ բնակարանային օրենսգրքի 28 հոդվածի 1-ին կետի՝ բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող են համարվում այն քաղաքացիները, ովքեր ընտանիքի յուրաքանչյուր անդամի համար ունեն բնակելի տարածության օրենքով սահմանված մակարդակից ցածր ապահովվածություն:

--- Համաձայն նույն օր. 29 հոդվածի՝ բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող քաղաքացիների հաշվառումը, որպես կանոն, իրականացվում է ըստ բնակության վայրի:

--- ՀՀ ԲՆ. օր. 34 հոդվածում թվարկված հիմքերից որևէ մեկը, որի առկայության դեպքում միայն քաղաքացիներին կարելի է հանել հաշվառումից(հերթացուցակից) հայցվորի պարագայում բացակայում է:

Այսպիսով, Անուշ Մովսեսի Մովսեսյանը 1982թ.-ի ապրիլ ամսից բնակվել է Վանաձորի Շիրակի խճ. թիվ 40 շենքի, թիվ 401 սենյակում: Նա այդտեղ հաշվառվել է 1982թ. ապրիլի 27-ից: Նշված շենքը եղել է հանրակացարանային և այդ պատճառով նա համարվել է բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ու որպես այդպիսին հաշվառման է վերցվել և ընդգրկվել հերթացուցակում: Նա այդ սենյակում

բնակվել է մինչև 1988թ. դեկտեմբերի 7-ի երկրաշարժը, որից հետո շենքը փլուզվել է և նա ստիպված բնակվել է տարբեր վայրերում(տնակներում) և մինչ այժմ համարվում է բնակարանային պայմանների կարիք ունեցող: Բնակարանային հերթացուցակի կապակցությամբ հայցվորը դիմել է Վանաձորի քաղաքապետարան, սակայն նրան պատասխանել են, որ Վանաձորի քաղխորհրդի գործկոմի 1992թ. փետրվարի 28-ի թիվ 5-2-1 որոշմամբ, հիմք ընդունելով ՋԵԿ-ի ադմինիստրացիայի գրությունը, ընտանիքին հանել են բնակարանային կարիքավորների հերթացուցակից՝ բնակարանում 1982թ.-ից չբնակվելու պատճառով: Հայցվորը գտնվում է նյութապես անապահով վիճակում, միայնակ մայր է և ունի երկու անչափահաս երեխաներ:

Այսինքն, Անուշ Մովսեսի Մովսեսյանը հանդիսանում է բնակարանի կարիքավոր, ուստի և դատարանը գտնում է, որ անհրաժեշտ է նրան և վերջինիս ընտանիքի անդամներին ընդգրկել բնակարանային բարելավման կարիք ունեցողների ցուցակում:

Ելնելով վերորդյալից և ղեկավարվելով ՀՀ քաղ. դատ.օր-քի 130-132 հոդվածներով՝ դատարանը

ՎՃՌԵՑ

Բավարարել հայցը.

Վանաձորի քաղաքապետարանին պարտավորեցնել Անուշ Մովսեսի Մովսեսյանին և նրա ընտանիքի անդամներին՝ Հասմիկ Արտավազդի Մովսեսյանին, Հայկուհի Ալեքսեյի Մովսեսյանին ընդգրկել բնակարանային բարելավման կարիք ունեցողների ցուցակում:

Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում դա կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Վճիռը կարող է բողոքարկվել քաղաքացիական գործերով ՀՀ վերաքննիչ դատարանում՝ 15 օրվա ընթացքում:

ԴԱՏԱՎՈՐ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ